Կրաշեն

Մակերես՝ 13.4կմ^2

Բնակչություն՝ 264

krashen.shirak@mta.gov.am

Գյուղ Գյումրու տարածաշրջանում, մարզկենտրոնից գտնվում է 18կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Ախյոլի, Ախքիլիսա, Աղյոլի, Աղքիլիսա անվանումները: Կրաշեն է վերանվանվել 1945 թ-ին: Նախկինում մտել է Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի մեջ:
Գյուղը գտնվում է Շիրակի լեռնաշղթայի հարավային փեշերին՝ ծովի մակարդակից 1880մ բարձրության վրա: Կիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Լինում են ուժեղ քամիներ, հաճախակի են ձնաբքերը և սառնամանիքները: Ամառը տաք է, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը 500-600մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններ են: Գյուղում եղել են զգալի ավերվածություններ 1988 թ-ի դեկտեմբերի 7-ի երկրաշարժից:
Գյուղի տարածքում գտնվում է 1859 թ-ին կառուցված ս. Աստվածածին եկեղեցին:
Գյուղի բնակչության նախնիները գաղթել են Արևմտյան Հայաստանի Էրզրումի և Պարսկահայաստանի շրջաններից 1829-1830թթ: 1831 թ-ին գյուղն ունեցել է 219, 1897 թ-ին՝ 614, 1926 թ-ին՝ 279, 1939 թ-ին՝ 424, 1959 թ-ին՝ 376, 1970 թ-ին՝ 242, 1979 թ-ին՝ 222 բնակիչ: Ըստ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համայնքը 2013թ-ի հունվարի 1-ի դրությամբ ունեցել է 264 մարդ: Սեռային կազմում տղամարդիկ կազմում են 51%, կանայք՝ 49%: Տարիքային խմբերը բաշխված են հետևյալ կերպ. մինչաշխատունակներ՝ 32%, աշխատունակներ՝ 51%, հետաշխատունակներ՝ 17%: Ունի 61 տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, բուժկետ, կապի հանգույց:
Գյուղատնտեսական հողահանդակները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր՝ կազմելով 160հա: Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, արոտավայրեր, կազմելով համապատասխանաբար 47 և 561 հեկտար:
Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Զբաղվում են հացահատիկային, կերային, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ, պտղաբուծությամբ (խնձոր, տանձ, բալ): Նախկինում զբաղվել են շաքարի ճակնդեղի մշակությամբ, որոնք վերամշակվել է Սպիտակի շաքարի գործարանում: Երկրաշարժի արդյունքում գործարանը հիմնովին ավերվել է և շաքարի ճակնդեղի ցանքերի մակերեսները զգալի կրճատվել են:
Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են դպրոցական գույքի նորացումը, խմելու ջրագծերի վերանորոգումը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, գազաֆիկացումը:

ՀՀ Շիրակի մարզ, գ. Կրաշեն
Ինդեքս՝ 2622